

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՈՍՏԸ

(Լեռնօցնովից)

Ասա՛ ինձ, ո՛ւս Պաղեստինի,
Ո՛ւր ես բուսել, ո՛ւր — ծաղկել.
Ո՛ր բլուրի կամ ո՛ր հովսի
Զարգարանի ես դու եղել։

Արեւելքն է արդեօք շոյել
Քեզ իր շողով ոսկեվառ,
Եւ Յորդանան բունըդ ցօղել
Իր ջրերով զովարար։

Թէ՛ քամին է աղմկելով
Խոր գիւղերույ խաւարում
Քեզ օրօրել լի ցասումով
Լիքանանու լեռներում։

Աղօթք էին արդեօք ասում,
Թէ՛ երգ եղում վաղեմի,
Երբ քո սաղարթն էին հիւսում
Խեղճ որդիքը Սաղեմի։

Եւ կա՛յ դեռ այն արմաւենին
Լայնաւերեւ գանգուրով.
Անցորդներին նա տալ օրին
Պարգեւո՛ւմ է հով ու զով։

Թէ՛, քեզ նըման, նա՛ էլ թօշնել
Անչաւման մէջ հէգ, սրտում,
Եւ սաղարթն է նըրա դեղնել
Հովսի փռուց անկըտում...

Ասա՛, ո՛ւմ ձեռքն աստուածավախ
Քեզ բերել է այս աշխարհ.
Տըխրել է նա արդեօք յանախ,
Եւ ջերմ լացել քեզ համար:

Թէ՛ նա Տիրոջ զինուոր էր քաջ,
Ճակսին կընիք մաքուրեան.
Մարդկանց միջում, Աստուծոյ առաջ
Քեզ պէս — նա՛ էլ երկնարժան:

Խնամքով պահած՝ դու կանգնած ես
Հանդէպ այս սուրբ պատկերի,
Հաւատարիմ պահնորդի պէս,
Ո՛ւս սրբազան աշխարհի:

Կիսախաւա՛ր, կանթեղի լո՛յս,
Խա՛չ, տապանա՛կ — սո՛ւրբ նըշան...
Ո՛ղջ շընչում եմ խինդ, սէր ու յոյս
Քո չորս բոլո՛ր, քո վըրա՛ն:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ